Ցոլակ, որ կ'իմանար՝ փոթորկի պէս սրացաւ Լամպի փոշի հանեց: Երբ Գուրգէն մտաւ Որդոք արդէն իւր չորս հարիւրքը իրեն կը սպասէին: «Ապրի՛ք տղաք, որ այսպէս կազմ եւ պատրաստ էք, քշենք երթանք, դուք ուսկի՞ց իմացաք թշնամուոյն գալը»,— հարցուց Գուրգէն:

— Ես որ ճանապարհի պահապանն էի,— ըսաւ երիտասարդ ձիաւոր մը,— տեսայ իրենց գալը եւ իմաց տուի:

— Ինչ՞փ կարծես թէ կան թշնամիք:

— Միայն Բուղայէ ղրկուած արքունի զօրք երկու հազար են եղեր, եւ զօրավարին անունը Բուտել է. կան իրենց հետ ութմանիկք՝ եւ Վասպուրականի ազատներէն նաեւ միաբանէր են նոցայ հետ եւ մեր վրայ կ'ուգան եղեր:

— Այս տեղեկութիւնքը դու ուստի՞ առիր, ա՛յ տղայ:

— Յառաջընթաց ձիաւոր մը տեսայ, որ յանդուգն՝ կ'ուգար. սեպաձեւ ժայռի մը ստորոտ ծածկուեցայ. երբ նա անցաւ յարձակեցայ վրան եւ առաջի նիզակի հարուածին, որ ձիուն գաւակեն տուի, մարդ եւ ձի գէաին գլորեցան. մարդը ամա՛ն գոչից. «Քեզ չեմ սպաննէր, միայն շիտակ զրուցէ՛ եւ առջեւես քալէ»,—ըսի. պատմելը պատմեց, բայց ինչ՛չափ որ աշխատեցայ եւ նիզակովս մտրակեցի՝ անպիտանը չի կրցաւ հոս հասնիլ, կէս ճամփան գետին ինկաւ եւ սկսաւ արիւն թքել. «Է՛լ կարող չեմ, կ'ուզես սպաննէ»,— ըսաւ. ես որ խօսք տուի՝ չուզեցի խոստմուքս աւրել, թողի կիսակենդան աւազին վրայ եւ եկայ:

— Ապրի՛ս, լաւ՛ ես ըրեր:

Երբ կէս ժամու ճամփայ յառաջացան Գուրգէնի զօրքը, եւ լաւ ու զօրաւոր դիրք մը գտաւ իրենց զօրավարը՝ բլրակի մը վրայ ուր աջ կը սղմեն գետը կը պտրտեր, եւ ձախը լեռներու գօտիքը, ուր դիրքը կը նեղուէր՝ հոն ճակատեցուց իւր գունդը. վահանաւոր զօրքով պարփակեց հետեւակ աղեղնաւորաց խումբը. եւ երբ թշնամիք